

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 17.11.2021թ. չորեքշաբթի թիվ 47 (1020)

## Աշխատանքային այց՝ Լոռու մարզ

### Հագեցած օրակարգով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը** եւ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանն** աշխատանքային այց են կատարել Լոռու մարզ:

Այցի շրջանակում ուղորտի պատասխանատուները եղել են Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջում, որը հիմնադրվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Նրանք շրջել են շինհրապարակում եւ ծանոթացել աշխատանքների ընթացքին: Հաջորդ տարի ՀՀ պետբյուջեի միջոցներով քոլեջին կտրամադրվեն գույք եւ սարքավորումներ, որպեսզի ուսումնական հաստատությունը 2022-2023 ուստարում իր դռները բացի ուսանողների առջև: Նշենք, որ 2016 թվականի դեկտեմբերին ՀՀ եւ Եվրոպական միության միջև ստորագրվել է ԵՄ բյուջետային աջակցության «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատանքների համար» ֆինանսավորման համաձայնագիրը, որով սահմանված նախապայմանների շրջանակում նախատեսվել են ընտրված գյուղատնտեսական ՄԿՈՒ ուսհաստատությունների վերանորոգում եւ վերակառուցում, համապատասխան գույքով եւ սարքավորումներով համալրում, անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում: Ընտրված գյուղատնտեսական ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների ցանկում ներառվել է նաեւ Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջը:

Նախարարի այցի հաջորդ կանգառը Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանն էր: Վահրամ Դումանյանը փոխնախարար Ժաննա Անդրեասյանի եւ բուհի ռեկտոր Ռուստամ Սահակյանի ուղեկցությամբ շրջել է բուհում եւ ծանոթացել ուսհաստատության ենթակառուցվածքներին, եղել համալսարանի գրադարանում եւ ծանոթացել այնտեղ պահվող հնատիպ գրքերին: Նրանք շրջել են բնական գիտությունների ֆակուլտետում, կենսաբանաէկոլոգիական հետազոտությունների եւ բնագիտական կոմպլեքս լաբորատորիայում, եղել են բուհի երկու լսարաններում, որոնք անհրաժեշտ պարագաներով համալրվել են Էրազմուս+ ծրագրի ARMOCT նախագծի շրջանակում:

Այնուհետեւ ԿԳՄՍ նախարարը հանդիպել է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Բուհի ռեկտոր **Ռուստամ Սահակյանը** ներկայացրել է համալսարանի ընթացիկ գործունեությունը՝ ընդգծելով, որ ներկայումս բուհում գիտության զարգացման եւ միջազգային ծրագրերի ուղղությամբ իրականացվում են մի շարք կարեւոր գործընթացներ:

Վահրամ Դումանյանը, ողջունելով ներկաներին, ներկայացրել է բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը: Նա ընդգծել է, որ ոլորտում մի շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով առկա են բազում խնդիրներ: Օբյեկտիվ պատճառը, ըստ նախարարի, պայմանավորված է սահմանափակ պետական ֆինանսավորմամբ, որին լուծումներ են տրվում զարգացման տարբեր ծրագրերի միջոցով:

«Օրինակ՝ ՀՀ կառավարությունն ավելացրել է գիտության ոլորտի ֆինանսավորումը 85 տոկոսով, որը եւս բավարար չէ: Սակայն, ավելացումը կատարվել է կոնկրետ ծրագրերի մասով եւ այն պայմանով, որ դրանք չափելի արդյունք կապահովեն: Ոլորտում առկա սուբյեկտիվ պատճառը մի շարք բուհերում ստեղծված որոշակի անառողջ մթնոլորտն է: Իմ գերխնդիրն է այդ բուհերում ապահովել բուհին հատուկ ակադեմիական միջավայր եւ փոխադարձ վստահության մթնոլորտ, որպեսզի դրանք կրկին մտնեն իրենց գործունեության բնականոն հուն»,- փաստել է նախարարը:

շարունակությունը՝ էջ 3



## Կառավարություն

### Կրթության նոր մոդել՝ 9 մլրդ դրամ արժեքով

Սյունիքի մարզում ՀՀ կառավարությունը կիրականացնի կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագիր, որի իրականացման համար կպահանջվի 9 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության նիստում ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** ներկայացրել է ծրագրի հիմնական դրույթները:

Ըստ նախարարի ներկայացրած զեկույցի՝ Հայաստանի Հանրապետությունում փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող գյուղական դպրոցները, որոնք ունեն մինչեւ 100 աշակերտ, կազմում են դպրոցների ընդհանուր թվի շուրջ 31,5 տոկոսը:

շարունակությունը՝ էջ 2

## Աշխարհի հետ

### Հայաստանը միացավ «Հորիզոն-Եվրոպա» ծրագրին

Բրյուսելում Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջև ստորագրվել է «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների եւ նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ համաձայնագիրը:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը դառնում է Եվրոպական միության «Հորիզոն Եվրոպա» ծրագրին լիիրավ ասոցացված պետություն, եւ Հայաստանի գիտնականները իրավունք են ստանում օգտվելու Եվրոպական միության ամենամեծ՝ 95,5 մլրդ Եվրո ֆինանսավորում ունեցող գիտական համագործակցության ծրագրի ընձեռած հնարավորություններից:

Համաձայնագրի ստորագրմանը նվիրված առցանց հանդիպմանը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը**:

շարունակությունը՝ էջ 2

## «Կայուն դպրոցական սնունդ»

### Եվս երկու մարզում

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ) ՀՀ կառավարությանն է փոխանցում Գեղարքունիքի եւ Լոռու մարզերում իրականացվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հետագա կառավարումը եւ իրականացումը: Ծրագրի փոխանցման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Վանաձորի թիվ 27 դպրոցում:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**, ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Ելենա Միլոշեւիչը**, ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան **Սերգեյ Կոպիրկինը**, ՌԴ Եյուլայի սննդի ինստիտուտի ներկայացուցիչ **Օքսանա Ջոտովան**, պետական գերատեսչությունների եւ դեսպանատների, ՀՀ Գեղարքունիքի եւ Լոռու մարզերի ծրագրի շահառու դպրոցների ներկայացուցիչներ, հյուրեր:

շարունակությունը՝ էջ 4

Կամավոր ատեստավորում

Կրթության նոր մոդել՝ 9 մլրդ դրամ արժեքով

Հավելավճար՝ հինգ տարի ժամկետով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի՝ նոյեմբերի 5-ի 1687 հրամանով հաստատվել է սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման արդյունքում ատեստավորումն անցած եւ հավելավճար ստացող ուսուցիչների անվանացանկը:

Ըստ այդմ՝ 60-69 տոկոս դրական միավոր ստացած ուսուցիչները համարվում են ատեստավորումն անցած (169 ուսուցիչ):

Ավելի բարձր միավորներ ստացած ուսուցիչներին 2021 թվականի հոկտեմբերի 1-ից 5 տարի ժամկետով կտրամադրվի ուսուցչի աշխատավարձի հավելավճար, որը կհաշվարկվի՝ ըստ ուսուցչի հիմնական աշխատավարձի:

- 70-79 տոկոս ստացած ուսուցիչներին՝ 30 տոկոսի չափով (159 ուսուցիչ),

- 80-89 տոկոս ստացած ուսուցիչներին՝ 40 տոկոսի չափով (153 ուսուցիչ),

- 90-100 տոկոս ստացած ուսուցիչներին՝ 50 տոկոսի չափով (166 ուսուցիչ):

Նշենք, որ սեփական նախաձեռնությամբ ուսուցչի կամավոր ատեստավորման շրջանակում առարկայական գիտելիքի ստուգմանը մասնակցել են 996 ուսուցիչներ, որոնցից 647-ը՝ շուրջ 65 տոկոսը, անցել է ատեստավորումը: Նրանցից 478-ը՝ այսինքն՝ ատեստավորումն անցածների 74 տոկոսը, կստանա հավելավճար:

Հիշեցնենք, որ ուսուցչի կամավոր ատեստավորման նպատակով առարկայական գիտելիքների ստուգումներն անցկացվել են 2021 թվականի սեպտեմբերի 18-ին, 19-ին, 25-ին եւ 26-ին 7-12-րդ դասարաններում «Հայոց լեզու եւ գրականություն», «Հայոց պատմություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» եւ «Աշխարհագրություն» առարկաները դասավանդող ուսուցիչների համար:

Նշենք նաեւ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2021 թվականի հոկտեմբերի 8-ի հրամանով փոփոխություն է կատարվել կամավոր ատեստավորման կարգում: Նշված կարգի 28-րդ կետում կատարվել է խմբագրում եւ սահմանվել ատեստավորման համար անցողիկ համարվող միավորների նոր սահմանը՝ իջեցնելով մինչ այդ սահմանված շեմը:

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

սկիզբը՝ էջ 1

Այս խնդիրը հատկապես զգալի է Սյունիքի մարզում, որտեղ գործող 117 հանրակրթական ուսումնական հաստատությունների երկու երրորդը (78 դպրոց կամ հաստատությունների 66,7 տոկոսը) ունի մինչեւ 100 սովորող, որը, որպես ոչ դրական ցուցանիշ, ամենամեծն է հանրապետությունում: Ընդ որում՝ մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցներն այստեղ հիմնականում ունեն միջինը երեք տասնյակ սովորող:

Սյունիքում գործում է ընդամենը 51 նախադպրոցական հաստատություն, որտեղ ընդգրկված են շուրջ 4621 երեխաներ կամ նախադպրոցական կրթության շահառու երեխաների շուրջ 5,6 տոկոսը:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված կրթության որակի բարձրացման եւ կրթական ծառայությունների հասանելիության գերակայությունը՝ Կապան խոշորացված համայնքի 31 գյուղական բնակավայրերի համար ՀՀ վարչապետի՝ նոյեմբերի 4-ի որոշմամբ հաստատվել է կրթական ծառայությունների ապահովման ծրագիրը, որով նախատեսվում է կրթական նոր մոդելի գործարկում:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի զեկուցմամբ՝ Կապան խոշորացված համայնքում կրթական գործընթացը պետք է կազմակերպվի 13 կրթական հանգույցներում:

«Ուսումնասիրությունների եւ տեղազնությունների հիման վրա առաջարկվել է 31 բնակավայրերից 6-ում ունենալ նախադպրոցական եւ դպրոցական ծառայություններ ներառող առանձին հաստատություններ՝ զարգացնելով ենթակառուցվածքներն ու կրթության մատուցման որակը: Մնացյալ բնակավայրերը կարող են միավորվել 7 կլաստերներում՝ ձեւավորելով կրթահամալիրներ, որտեղ կիրականացվեն թե՛ հանրակրթական, թե՛ նախադպրոցական, թե՛ այլ կրթական ծրագրեր՝ ըստ անհրաժեշտության:

Ընտրված 13 բնակավայրերից 2-ի դեպքում առկա դպրոցների շենքերի փոխարեն կկառուցվեն նորերը՝ դրան-



ցում նախատեսվելով մարզադահլիճներ եւ այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ: 8-ի դեպքում առկա դպրոցների շենքերը կվերակառուցվեն, իսկ 3-ի դեպքում, ելնելով շենքային անբարենպաստ պայմաններից, վերակառուցման տեսանկյունից տնտեսապես անարդյունավետությունից, առկա դպրոցների շենքերի փոխարեն կկառուցվեն փոքր թվով երեխաներով համալրված մոդուլային ուսումնական հաստատություններ: Կրթահամալիրների գործունեության համար նախագծվել են ծրագրվել են 8 տրանսպորտային ուղիներ, որոնք պետք է ապահովեն երեխաների անվտանգ տեղափոխումը բնակավայրից բնակավայր ներառելով նաեւ ուղեկցորդի ծառայությունը: Եվ առանձին գործող հաստատությունները, եւ՝ կրթահամալիրները պետք է ունենան վերանորոգված շենքեր՝ հագեցած նոր ուսումնական գույքով եւ առարկայական լաբորատորիաներով»,- նշել է Վահրամ Դումանյանը: Նրա խոսքով՝ իրականացվելու է մանկավարժների վերապատրաստում:

Հատկանշական է, որ Կապան խոշորացված համայնքի 31 գյուղական բնակավայրերից միայն 6-ում են առկա նախադպրոցական ծառայություններ: Նշված գյուղերում ներկայում գործում է 18 հանրակրթական ուսումնական հաստատություն:

«Սյուն բնակավայրերի դպրոցահասակ երեխաները հաճախում են մոտակա բնակավայրի դպրոց: 31 բնակավայրերում շահառու երեխաների թիվը հասնում է շուրջ 1000-ի՝ ներառյալ դպրոցականները եւ նախադպրոցական տարիքի 3-6 տարեկան երեխաները»,-

գործադիրի նիստում տեղեկացրել է ԿԳՄՍ նախարարի՝ հանրակրթության ոլորտը համակարգող տեղակալ ժաննա Անդրեասյանը՝ ամբողջացնելով ծրագրի վերլուծությունը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով Սյունիքի մարզում կրթական որակյալ ծառայությունների ծրագրին, նշել է, որ այդ օրինակով քարտեզագրվելու են ողջ հանրապետության կրթական կարիքները՝ որպես առաջնային նպատակ ունենալով որակյալ կրթության հասանելիությունը ՀՀ բոլոր բնակավայրերում: Վարչապետի խոսքով՝ ուղեգնային է համարվում նախադպրոցական կրթության ընդլայնումը, արդյունավետ եւ որակյալ հանրակրթության կազմակերպումը եւ որպես վերջնարդյունք՝ մարդկային կապիտալի ինդեքսի ցուցանիշների բարելավումը:

35 տոկոսը չի կարողանում կարդալ եւ հասկանալ պարզ տեքստը

Ծրագրի ներածական հատվածում ներկայացված վերլուծության մեջ նշվում է, որ 2020 թվականին հրապարակված մարդկային կապիտալի ինդեքսի համաձայն տարրական դպրոցի ավարտին սովորողների շուրջ 35 տոկոսը չի կարողանում կարդալ եւ հասկանալ պարզ տեքստը: Սա շատ ավելի բարձր է տարածաշրջանի համեմատ՝ 11 %, չնայած ավելի ցածր է, քան համաձայն տնտեսական արդյունք ունեցող երկրների ցուցանիշը՝ 38 %: Այս ցուցանիշի համար հիմք են ծառայել 2015 թ. TIMSS-ի (Trends in International Mathematics Science Study) մասնակցի եւ բնագիտության միջազգային միտումների ուսումնասիրություն) միջազգային ստուգատեսի արդյունքները: Հայաստանը TIMSS-ին մասնակցել է նաեւ 2019 թվականին՝ գրանցելով առաջընթաց 2015 թ. նկատմամբ: Մասնավորապես՝ 400 միավորից ցածր հավաքած սովորողների մասնաբաժինը 30 տոկոսից կրճատվել է 20 տոկոսի, ինչը, միեւնույն է, մտահոգող ցուցանիշ է:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանը միացավ «Հորիզոն-Եվրոպա» ծրագրին

սկիզբը՝ էջ 1

Համաձայնագիրը ՀՀ կողմից ստորագրել է Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության ղեկավար եւ Բելգիայի Թագավորությունում արտակարգ եւ լիազոր դեսպան Աննա Աղաջանյանը, ԵՄ կողմից՝ Հետազոտությունների եւ նորարարության եվրոպական հանձնաժողովի գլխավոր տնօրենի տեղակալ Սիգնե Ռացոն:


ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ մասնակցությունը «Հորիզոն-Եվրոպա» ծրագրին Հայաստանի ազգային գիտահետազոտական համակարգի զարգացման համար կարեւոր քայլ է, նոր գիտելիքների ու փորձի ձեռքբերման հնարավորություն:

«Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է միջոցառումներ, որոնք կնպաստեն ծրագրին Հայաստանի գիտական հանրության մասնակցության ընդլայնմանը: Մենք լիաժողով ենք, որ ծրագրի շնորհիվ հայաստանյան գիտական խմբերն ավելի մեծ ներդրում կունենան ժա-

մանակակից գլոբալ մարտահրավերների լուծմանն ուղղված հետազոտական աշխատանքներում»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը: Նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել գործընթացում ներգրավված բոլոր կողմերին, այդ թվում՝ Եվրոպական միությունում ՀՀ դեսպանությանը՝ ի դեմս Բելգիայում Հայաստանի Հանրապետության դեսպան եւ Եվրոպական միությունում հայաստանյան ներկայացուցչության ղեկավար տիկին Աննա Աղաջանյանի, սեղմ ժամկետում համաձայնագրի վավերացման աշխատանքները կազմակերպելու համար:

«Հորիզոն Եվրոպա» ծրագիրը նախատեսված է 2021-27 թվականների համար: Մասնակցությունը ծրագրին հնարավորություն է տալիս հայ գիտնականներին ինտեգրվել Եվրոպական գիտական տարածքում, օգտվել ԵՄ երկրների գիտական ենթակառուցվածքներից եւ դառնալ մասնակից համաշխարհային մակարդակի գիտական հետազոտություններին:

«Հորիզոն Եվրոպա» ծրագիրը փոխարինելու է «Հորիզոն 2020» ծրագրին, որին



Հայաստանը հաջողությամբ մասնակցել է 2016-2020 թթ.: «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակում հայաստանյան գիտական խմբերի մասնակցությամբ ներկայացվել են 312 հայտեր, որոնցից վավեր են ճանաչվել 271-ը, եւ ֆինանսավորման են երաշխավորվել 35-ը: Անոցացված երկրների շարքում Հայաստանի Հանրապետության մասնակցության հաջողության գործակիցը 11,81 տոկոս է:

«Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրին, ինչպես նաեւ միջազգային այլ ծրագրերին ՀՀ գիտնականների մասնակցությունը խթանելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ

գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ այս տարվա օգոստոսին վերաբացվել է Գիտական ծրագրերի ինտեգրման աջակցության կենտրոնը, որը հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությունը տարածում է գիտական շրջանակներում, հայտատուներին եւ ծրագրի հնարավոր շահառուներին, մատուցում է խորհրդատվական ծառայություններ, համակարգում է ծրագրի թեմատիկ ուղղություններով նշանակված ազգային կոնտակտային անձանց աշխատանքները:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության նոյեմբերի 4-ի նիստում հաստատվել էր «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների եւ նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին համաձայնագիրը ստորագրելու Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության առաջարկությունը:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մշակույթ

Ի խնկարկումս

Հոբելյանական ցուցահանդես՝ սվիրված Գեղարվեստի ակադեմիայի 75-ամյակին

Հայաստանի նկարիչների միության «Արա Սարգսյան» ցուցահանդեսում տեղի ունեցավ ցուցահանդես՝ սվիրված Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հիմնադրման 75-ամյակին:

Հոբելյանական ցուցահանդեսը բացեց Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը: Նա ողջունեց ու շնորհավորեց ներկաներին, շնորհակալություն հայտնեց գեղարվեստի ակադեմիայի դասախոսական կազմին, նաև անցյալում կրթակառույցին ծառայած գործիչներին: Ապա խոսքը փոխանցեց Հայաստանի ժողովրդական նկարիչ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ղեկավար Արամ Իսաբեկյանին: Վերջինիս առաջարկով ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին կրթօջախի՝ Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված 13 ուսանողների հիշատակը: Բուհի ղեկավարը ակադեմիայի անցած ուղու մասին խոսելիս հատկապես նշեց Արա Սարգսյանի և Մարտիրոս Սարյանի անունները: Ըստ ներկայիս անկախության շրջանում 1994 թ.-ից, բուհը աննախադեպ զարգացում է ապրել՝ ձեռք է բերել նոր մասնաշենք Երևանում, բացել մասնաճյուղեր Գյումրիում և Դիլիջանում, ունեցել սեփական ցուցասրահ, սկսել համագործակցություն եվրոպական կառույցների հետ, նաև ավելացել է ուսանողների թիվը ու մասնագիտությունների քանակը: Արամ Իսաբեկյանը նշեց, որ բուհի ուսումնական ծրագրերից օգտվել են ուրիշները: Վեր-



ջում կրթօջախի ղեկավարը շնորհավորեց ներկաներին ցուցահանդեսի և ակադեմիայի հիմնադրման առթիվ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը շնորհավորեց Գեղարվեստի ակադեմիայի բոլոր դասախոսներին, շրջանավարտներին, ուսանողներին, նշեց, որ հոբելյար հաստատությունը, կրթականից բացի, մշակութային շերտ է, նաև ասաց, որ կերպարվեստի մարդիկ մեծ անելիք ունեն հայ թատրոնի զարգացման գործում:

Բուհի 75-ամյակին նվիրված ցուցահանդեսի շրջանակում ներկայացված էին հիմնականում բուհի այսօրվա դասախոսների (և մի քանի շրջանավարտների) 100-ից ավելի ստեղծագործություններ: Ընտրությունն արվեստագետներինն էր:

Ցուցահանդեսի ընթացքում սահիկահանդեսով (սլայդ շոու) ներկայացվում էին կրթագեղարվեստական հաստատության անցյալ ու ներկա առօրյան ու գործունեությունն արտացոլող նկարներ:

Հիշյալ միջոցառումը նախատեսված էր անցկացնել անցյալ տարի, քանզի 75-ամյակը լրանում էր 2020-ին, սակայն կովիդի

և պատերազմի պատճառով հետաձգվեց: Խնդրո առարկա ցուցահանդեսը կարող էր ավելի մեծ լինել, եթե չլինեին խանգարող հանգամանքներ: Գեղարվեստի ակադեմիայի 60 և 70-ամյակների առթիվ Հայաստանի ազգային պատկերասրահում և Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպվել էին ցուցահանդեսներ, որոնցում ներկայացվել էին բուհի շրջանավարտների և հայ կերպարվեստի մեծերի աշխատանքներ:

Հայաստանի կերպարվեստի գործիչների 90 տոկոսից ավելին ավարտել է Գեղարվեստի ակադեմիան: Մեր երկրում կերպարվեստի բոլոր ճյուղերի ուսուցման հիմնադիրը հոբելյար կրթօջախն է: Այն միակն է հանրապետությունում որպես պրոֆեսիոնալ կերպարվեստի բուհ:

Նշենք, որ նույն օրը՝ այս ցուցահանդեսից առաջ, Գեղարվեստի ակադեմիայի Ալբեր և Թովե Բոյաջյան ցուցասրահում բացվել էր ներկայումս բուհում ուսանող սաների աշխատանքների ցուցահանդեսը:

Հրայր ԲԱԼՈՅԱՆ

Խաչքար՝ ի հիշատակ նահատակ սաների

2018 թ. Երևանի Աղասի Խանջյանի անվան հ. 53 հիմնական դպրոցի բարերար «Սուքիասյան» բարեգործական հիմնադրամը, ի դեմս Սարիբեկ Սուքիասյանի, կատարեց հերթական բարեգործական գումարային նվիրատվությունը կրթօջախին: Այդ գումարով արվեց դպրոցի մասնակի վերանորոգում: Դպրոցի տնօրեն Մարիամ Սարգսյանը նշված գումարի որոշակի մասը տնտեսեց, եւ այդ տնտեսված գումարով ստեղծվեց մի ծաղկած խաչքար՝ նվիրված կրթօջախի համուն հայրենիքի զոհված սաներին:

Օրերս դպրոցի բակում տեղի ունեցավ խաչքարի բացման և օծման արարողությունը: Միջոցառումը բացեց կրթարանի տնօրենը: Օծման արարողությունն իրականացնում էին Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգևոր սպասավորներ Տեր Աշոտ քահանա Աբրահամյանը և Ներսես սարկավազ Դազարյանը: Ներկաները հնչեցրեցին Տերունական աղոթքը առ Աստված, ապա սկսվեց օծման արարողությունը: Այնուհետ խոսեց տնօրենը՝ ներկայացնելով հերոսաբար զոհված աշակերտների անցած ուղին:



9-ի և 9-ի բ դասարանների աշակերտուհիներ Անուշիկ Չոբանյանն ու Անուշիկ Այվազյանը և 3-րդ և դասարանի աշակերտ, զոհված հերոս Կարապետ Անտոնյանի եղբայրը՝ Արտյոն Անտոնյանը, արտասանեցին հայրենասիրական բանաստեղծություններ: Հայրենասիրական երգերով հանդես եկան 1-ին և դասարանի աշակերտ Արեն Թանդիլյանը և նույն դպրոցի «Ազգային երգ ու պար» առարկայի ուսուցչուհի Արուսյակ Հարությունյանը: Միջոցառման փակման խոսքում տնօրենը խաղաղություն մաղթեց աշխարհին: Չոհված տղաների կրտսեր եղբայրները օդ բաց թողեցին աղավնիներ:

Խաչքարի հեղինակները խաչքարագործներ հայր և որդի Հմայակ և Համլետ (ծնող) Պետոյաններն են: Խաչքարի վրա փորագրված են 1994 թ. Արցախյան պատերազմում զոհված Երվանդ Համլետի Աղաջանյանի, Վաղինակ Ալբերտի Ազատյանի, 2020-ի 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված Ստեփան Խաչիկի Դանոյանի (կամավոր), ժամկետային ծառայողներ Կարապետ Հովհաննեսի Անտոնյանի, Մարատ Լեռնիկ Ծատիսյանի նվիրական ու անմահ անունները:

Միջոցառմանը ներկա էին զոհված հերոսների ծնողները, հարազատները, «Սուքիասյան» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչները, Երևանի քաղաքապետարանի ավագանու անդամ, դպրոցի շրջանավարտ ու բարեկամ Լեւոն Չաքարյանը, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ և այլք:

Հր. ԲԱԼՈՅԱՆ

Հագեցած օրակարգով

սկիզբը՝ էջ 1

Նա տեղեկացրել է, որ ներկայում շրջանառվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի խմբագրված տարբերակը համապատասխանեցվել է ԱԳ որոշման պահանջներին: Վահրամ Դունանյանը նշել է, որ օրենքի ընդունումից հետո դրա կիրարկման համար անհրաժեշտ է համախմբել ուղրտի բոլոր ներկայացուցիչների ջանքերը, քանի որ նախատեսվում է բավականին մեծ ծավալի աշխատանք: Մասնավորապես՝ նախատեսվում է ասպիրանտուրայի, գիտական աստիճանաշնորհման և կրթական ծրագրերին առնչվող փոփոխությունների փաթեթ, որն օրենքի ընդունումից հետո կմտնի գործնական փուլ՝ նոր կարգեր, ենթօրենսդրական կարգեր և այլն:

Վահրամ Դունանյանն անդրադարձել է պետական և ոչ պետական բուհերին, դրանց մասնաճյուղերի քանակին և իրավականակերպական ծելին, ինչպես նաև բուհերում որակյալ կադրերի անհրաժեշտությանն առնչվող խնդիրներին: Նա քննարկել է պրոֆեսորադոսախոսական կազմի և գիտաշխատողների վարձատրության, ուսման վարձավճարների, ուսա-



նողական վարկերի հետ կապված հարցեր: Նախարարի ելույթից հետո ներկաները մի շարք հարցեր են ուղղել նրան: Դրանք վերաբերել են բուհի ամբիոնների, հոգաբարձուների և գիտական խորհուրդների գործունեությանը, մարզադաշտերի առկայությանը, կրթական ծրագրերի ստանդարտների բացակայությանը, դասախոսներին սոցիալաթթի տրամադրման հնարավորությանը:

«Մենք՝ յուրաքանչյուրս, մեր տեղում պետք է մեր գործունեության և նվաճումների մասին հաշվետվություն ներկայաց-

նենք մեր հանրությանը, քանի որ այն մեզանից ակնկալում է որակյալ կրթություն: Մենք դասախոսի և գիտնականի աշխատանքը գրավիչ պետք է դարձնենք երիտասարդների համար, այդ թվում՝ նրանց տրամադրելով սոցիալական երաշխիքներ»,- ամփոփել է նախարարը՝ ներկաների ուշադրությունը մեկ անգամ ևս հրավիրելով բուհերում ակադեմիական միջավայրի պահպանման և մասնագիտական դաշտում առողջ քննարկումների անցկացման կարևորության վրա:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի պետական հունանիտար թուեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են. 1.1 ՀՀ քաղաքացիություն,

1.2 ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները ներկայացնում են.

1. դիմում կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնակնանցման քարտի պատճենը,

3. հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,

4. տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,

5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են Երեւանի պետական հունանիտար թուեջում (հասցեն՝ ք.Երեւան, Հ.Արղունյան 1): 2021թ. նոյեմբերի 17-ից մինչեւ դեկտեմբերի 7-ը ներառյալ ներառյալ ամեն օր ժամը 10.00-15.00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. դեկտեմբերի 16-ին ժամը 14.00 Երեւանի պետական հունանիտար թուեջում:

Տեղեկությունների համար զանգահարել (095) 05-20-33, (010) 23-99-94 հեռախոսահամարներով, էլեկտրոնային հասցեն՝ yschs@mail.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեռ. 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գործույթի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեռ. 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքով,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են բերություններ, մասնակցից կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 17-ից մինչեւ նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 3-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ Եղեգնաձորի ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0281) 2-36-71 հեռախոսահամարով:

Եվս երկու մարզում

սկիզբ էլ 2

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ նախարար Վահրամ Դումանյանը մշտել է, որ արդեն շուրջ 11 տարի է, ինչ ՀՀ կառավարությունը ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի օգնությամբ, ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի տեխնիկական աջակցությամբ եւ ՌԴ կառավարության ֆինանսական օժանդակությամբ իրականացնում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Նրա խոսքով՝ ընդհանուր առմամբ վերջին տասը տարիների ընթացքում ծրագրի շնորհիվ օրական շուրջ 104 հազար երեխաներ ապահովվել են մեկանգամյա առողջ, բալանավորված սննդով, ներդրումներ են իրականացվել համայնքների տնտեսական միջավայրի բարելավման եւ առողջ ապրելակերպի զարգացմանը իրարից մեկը մեկը գործընթացներում:

«2016 թվականից սկսած՝ ՀՀ կառավարությունը նաեւ ֆինանսական պարտավորություն ստանձնեց ծրագրի իրականացման համար, երբ մեկնարկեց մարզերի փուլային հանձնումը ՊԴԾ-ի դպրոցական սննդի զարգացման ծրագրից ՀՀ կառավարության դպրոցական սննդի ազգային ծրագրին: Մինչ օրս ծրագրի հետագա ղեկավարումը ՀՀ կառավարությանն է հանձնվել վեց մարզում՝ Վայոց ձոր, Սյունիք, Արարատ, Տավուշ, Շիրակ եւ Արագածոտն: Ընդհանուր առմամբ շուրջ 50 հազար աշակերտներ պետական բյուջեի շրջանակում օգտվում են ծրագրից»,- մշտել է նախարարը՝ հավելելով, որ այժմ ծրագրի ազգայնացման եւ պետությանը դրա աստիճանաբար փոխանցման գործընթացում ներգրավվում են նաեւ Լոռու եւ Գեղարքունիքի մարզերի դպրոցները: 2022 թվականին կրճատվի եւ Կոտայքի մարզերի դպրոցները եւս դպրոցական սննդի ազգային ծրագրի մաս կկազմեն:

Ըստ Վահրամ Դումանյանի՝ համավարակով պայմանավորված՝ նախորդ տարի հետաձգվել է ծրագրի ներդրումը Գեղարքունիքի մարզի դպրոցներում:

«Հարկ է նշել, որ այդ ժամանակը մենք օգտագործեցինք արդյունավետ՝ համազորակցաբար վերանորոգելով դպրոցների ճաշարանները, որպեսզի երեխաները տաք սնունդ ստանալու հնարավորություն ունենան: Բացի դրանից՝ համավարակի պայմաններում դպրոցական սննդի ծրագիրը նույնպես ենթարկվեց փոփոխություններ, շարունակականությունն ապահովվեց սովորողների ընտանիքներին չոր սննդի փաթեթների տրամադրմամբ ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ գործընկերների կողմից ֆինանսավորվող մարզերում: 2019 թվականին ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հետ ստորագրված համաձայնագիրը նոր փուլ է բացում մեր հարաբերություններում, քանի որ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի համար նախատեսվում է նաեւ լրացուցիչ՝ «Տրանսֆորմատիվ դպրոցական սնունդ» բաղադրիչի ներդրումը, որի շրջանակում դպրոցները դիտարկվում են որպես յուրատեսակ ուսումնական կենտրոններ, որոնք կնպաստեն Հայաստանում մարդկային կապիտալի զարգացմանը, կստեղծեն աճի նոր պայմաններ, կխթանեն երկրի կանաչ եւ թվային տարածաշրջանային զարգացումը, ինչպես նաեւ կնպաստեն բնակչության առողջության բարելավմանը»,- շեշտել է նախարարը: Նրա խոսքով՝ ծրագրի նպատակը միայն երեխաներին ուղիղ աջակցություն տալն է, այն ունի նաեւ շատ կարեւոր այլ բաղադրիչ. թույլ է տալիս դպրոցի շուրջ միավորել համայնքի ջանքերը՝ առողջ սնունդը եւ ապրելակերպը դպրոցական բաղադրիչում ներառելու եւ դրա միջոցով հանրային վարքականոցն ձեւավորելու տեսանկյունից:



րոններ, որոնք կնպաստեն Հայաստանում մարդկային կապիտալի զարգացման բարելավմանը, կստեղծեն աճի նոր պայմաններ, կխթանեն երկրի կանաչ եւ թվային տարածաշրջանային զարգացումը, ինչպես նաեւ կնպաստեն բնակչության առողջության բարելավմանը»,- շեշտել է նախարարը: Նրա խոսքով՝ ծրագրի նպատակը միայն երեխաներին ուղիղ աջակցություն տալն է, այն ունի նաեւ շատ կարեւոր այլ բաղադրիչ. թույլ է տալիս դպրոցի շուրջ միավորել համայնքի ջանքերը՝ առողջ սնունդը եւ ապրելակերպը դպրոցական բաղադրիչում ներառելու եւ դրա միջոցով հանրային վարքականոցն ձեւավորելու տեսանկյունից:

«Խիստ կարեւորվում է այս խնդիրը, քանի որ հանրակրթության բովանդակային փոփոխությունների մեջ կարմիր գծով անցնում է առողջ ապրելակերպի գաղափարը: Պետք է ստեղծել, որ բազմաթիվ լավ համատեղ նախաձեռնություններ ունենք, օրինակ՝ դպրոցական այգիների մրցույթը, որը խրախուսում է մեր երեխաներին տարածքի ամեն հատվածն օգտագործել արդյունավետ, սովորել կարեւոր գիտելիքներ եւ միաժամանակ հանրային բարիք ստեղծել»,- փաստել է Վահրամ Դումանյանը եւ ընդգծել, որ ՀՀ եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունների, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, տեղական իշխանությունների, դպրոցների տնօրենների ու ծնողների համատեղ ջանքերի արդյունքում վերանորոգվել են դպրոցական ճաշարանները եւ վերազինվել ժամանակակից սարքավորումներով, վերապատրաստվել են խոհարարները՝ անվտանգ, առողջարար եւ համեղ սնունդ պատրաստելու նպատակով: Չնայած արձանագրված հաջողություններին, ըստ նախարարի,

դպրոցների մեծ մասի համար դեռեւս անհրաժեշտ է իրականացնել խոհանոցների եւ ճաշարանների հիմնանորոգում, համապատասխան գույքի ձեռքբերում, իսկ որոշ դպրոցներում ինժեներական կոմունիկացիաների ստեղծում:

Վահրամ Դումանյանը կարելու է, որ ծրագրի շրջանակում իրականացվում են նաեւ դպրոցներում կարողությունների զարգացման դասընթացներ, մասնավորապես՝ պետական գնումների գործընթացի, սննդի առողջապահական նշանակության, սննդամթերքի անվտանգության, հիգիենայի եւ գործնական խոհարարության ուղղություններով: Դասընթացները նախատեսված են դպրոցական ղեկավար անձնակազմի, խոհանոցի աշխատողների եւ ծնողական համայնքի համար:

«Հարկ է նշել, որ վերջին տասը տարիների ընթացքում ծրագրի շնորհիվ ստեղծվել են 16 դպրոցահեն ջերմոցներ, 15 դպրոցական այգիներ, 86 դպրոցներ հագեցվել են արեւային էներգիայի մարտկոցներով, իսկ 816 դպրոցների ճաշարաններ՝ սարքավորումներով, 512 դպրոցների ճաշարաններում վերանորոգման անհրաժեշտ աշխատանքներ են արվել: Սրանք էական արդյունքներ են, որոնց վրա մենք կարող ենք կառուցել հետագա քայլերը»,- մշտել է նախարարը՝ վերահաստատելով ՀՀ կառավարության պատրաստակամությունն ու հանձնառությունը՝ շարունակելու եւ զարգացնելու «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը՝ ի շահ երեխաների զարգացման եւ որակյալ կրթության ապահովման:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի տնօրեն Էլենա Միլոշեվիչի խոսքով՝ ՀՀ կառավարության հետ երկարամյա գործընկերության, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության եւ բազմաթիվ

այլ գործընկերների մշտական աջակցության շնորհիվ վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում «Դպրոցական սնունդ» ծրագիրը իր զգալի ենթակառուցվածքային եւ մարդկային կապիտալի ներդրումներով ստեղծել է ամուր հիմք, որը խթանում է համայնքային զարգացումը, խրախուսում է հասարակության ներգրավումը, ապահովում է բազմաշերտ կրթություն, ստեղծում է նոր աշխատանքային հնարավորություններ եւ խթանում առողջ ապրելակերպը:

«Մեր գործընկերների հետ մենք համաձայնեցինք կարելու մի ռազմավարական մոտեցման շուրջ, որը նախապատրաստում է կերտում է ապագան բազմաձայն ներդրումների հանձնառությամբ»,- մշտել է ՊԴԾ հայաստանյան գրասենյակի տնօրեն Ե. Ներկայացուցիչ Էլենա Միլոշեվիչը՝ հավելելով, որ ձեռքբերումները վկայում են, որ այս մոտեցումը շոշափելի արդյունքներ է ստեղծում:

ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը եւս ընդգծել է ծրագրի իրականացման եւ կատարված ներդրումների անհրաժեշտությունը: Նա կարելու է հայ-ռուսական հարաբերությունները՝ հաստատելով, որ Հայաստանում Ռուսաստանի Դաշնության համար առաջնահերթություն է աշխատանքային բոլոր ուղղություններով, այդ թվում՝ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի մասով:

ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի մասնագետ Վլադիմիր Չերնիզովը տեսաուղերձ է հղել միջոցառման մասնակիցներին: Նա շնորհավորել է բոլորին կատարված հսկայական աշխատանքի համար եւ մաղթել հետագա հաջողություններ՝ մնացած երկու մարզերը դպրոցական սննդի ազգային ծրագրին փոխանցելու գործում:

Ողջունելով խոսքով հանդես եւն եկել նաեւ Լոռու եւ Գեղարքունիքի փոխնախարարները:

Միջոցառման ընթացքում մասնակիցները վայելել են Լոռու մարզի Վանաձորի թիվ 27 եւ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի թիվ 2 դպրոցի աշակերտների կատարմամբ ներկայացումներ, մասնակցել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ճաշացանկի ցուցադրության համատեղին, ինչպես նաեւ ծանոթացել Գանձակ գյուղի թիվ 2 դպրոցի կանանց հզորացմանն ու համայնքի զարգացմանն ուղղված հաջողության պատմությանը: Ներկայացված շրջել են նաեւ ծրագրի շրջանակում հիմնված ջերմոցներում:

Հավելենք, որ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի տրանսֆորմատիվ բաղադրիչի շնորհիվ ներառվում են տեխնոլոգիաներով հագեցած ինտենսիվ այգիների, ջերմոցների հիմնադրմամբ եւ արեւային կայանների տեղադրմամբ հայաստանյան դպրոցները վերածվում են համայնքների զարգացման եւ երկարաժամկետ կրթական հարթակների: Ծրագիրը սննդարար, մաքուր եւ կանաչ սնունդն ուղղված ապագայի համալիր մոտեցում է:

Հեղինակ՝ ՅՈՒՐԱՆՆԱՅԱՆ



Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա-100

Պատառիկներ հայ երգչախմբային արվեստի պատմության էջերից

Սկիզբը՝ նախորդ համարում

Արմեն Տիգրանյանը իր ստեղծագործական ուղին սկսեց մեր ազգային երաժշտության պատմության չափազանց մի կարեւոր ժամանակաշրջանում, երբ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ միաշաղկապել էին ոճի ձեւավորման պրոցեսներ եւ եվրոպական երաժշտության ժանրերի յուրացման բարդ գործընթացը:

Արմեն Տիգրանյանը, լինելով Ալեքսանդրապոլի ծնունդ (այժմ Գյումրի), նրա երաժշտական հենքը ժողովրդական երաժշտությունն էր՝ իր տարբեր ճյուղերով՝ գեղջկական, քաղաքային ֆոլկլոր, նաեւ աշուղական: Իհարկե, Ալեքսանդրապոլի հարուստ երաժշտական կենցաղը, կոմպոզիտորի ծնողների ուշադրությունը գրականության եւ արվեստի նկատմամբ, ձեւավորեցին նրան ուրույն ոճ ունեցող կոմպոզիտորի: Եվ պատահական չէր, որ Տիգրանյանը իր ստեղծագործություններում գեղարվեստական ճշմարտացիությամբ պատկերեց իր ժողովրդի կյանքը, կենցաղը, սովորույթները, հայրենի բնությունը, ազգի հերոսական անցյալը:

Ա.Տիգրանյանը 15 տարեկան էր, երբ ընտանիքը փոխադրվում է Թիֆլիս: Սովորում է երաժշտական ուսումնարանում, ստանում երաժշտական նոր եւ բազմազան տպավորություններ:

Երգում է Կարա-Մուրզայի երգչախմբում, մասնավոր դասեր է առնում Մ.Եկմալյանից: Պատանի երաժիշտը գերվում է Վերդիի, Չայկովսկու օպերաներով, երազում է հայկական թեմայով օպերա գրել: Ծանոթանալով Ավ.Իսահակյանի պոեզիային՝ գրում է երգեր՝ «Ախ, իմ ծանփեն», «Սեւ աչերեն շատ վախեցիր», «Յուկերն առան», ինչպես նաեւ հետեւելով Կարա-Մուրզայի եւ Կոմիտասի օրինակին՝ նա սկսում է ժողովրդական երգեր հավաքագրել, մշակել ու տարածել:

Ա.Տիգրանյանը, արձագանքելով 1905թ. հեղափոխությանը, իր կողմից հիմնած երգչախմբի ծրագրում կատարում է նաեւ մի քանի հեղափոխական երգեր:

Ոգեշնչված Յ.Թումանյանի «Անուշ» պոեմով՝ կոմպոզիտորը իրագործում է իր վաղեմի ցանկությունը՝ սկսում է աշխատել օպերայի վրա: Օպերայի լիբրետոն գրում է ինքը՝ կոմպոզիտորը:

«Անուշ» օպերան քնարական-կենցաղային օպերա է, մասնաշաղկան տեսարաններով՝ տարբեր կազմի երգչախմբային հատվածներով, զուգերգերով:

Ամբողջության մեջ Յ.Թումանյանի պոեզիան ինքը Յայաստանն է, իհն է նոր հայրենի երկիրը: Յարգատ մնալով բանաստեղծի պոեմի գաղափարական բովանդակությանը՝ Արմեն Տիգրանյանը իր օպերայում գովերգում է հավատարիմ ու անձնուրաց սերը, բողոքի ձայն է բարձրացնում մարդու ազատության համար:

Օպերայի հինգ գործողությունների ընթացքում ժողովրդի կերպարը բնութագրվում է խմբերգերի եւ պարերի միջոցով: Այդ հատվածները բազմազան են,

իրենց բնույթով եւ տրամադրությամբ ցույց են տալիս ժողովրդին եւ ուրախության, եւ վշտի պահերին, առօրյա կյանքում, ինչպես նաեւ ծիսական տոնակատարությունների ժամանակ:

Խմբերգային համարները՝ սկսած օպերայի նախերգանքից, «Անպի տակից», «Յամբարծում յայլա», ինչպես նաեւ օպերայի վերջին խմբերգը Անուշի եւ Սարոյի ողբերգական ճակատագրերի նկարագրությունն է:

«Անուշ» օպերայում Ա.Տիգրանյանը ստեղծել է Յ.Թումանյանի պոեմին միանգամայն համահունչ երաժշտություն: Կոմպոզիտորը ժողովրդական մեղեդիներ չի օգտագործել իր օպերայում, բայց իր ոգով եւ բովանդակությամբ այնպիսի երաժշտություն է, որն իր մեղեդիական առանձնահատկություններով խորապես ժողովրդական է:

Կոմիտասն առաջինն էր, որ հենվելով հայ երաժշտության խոր եւ բազմակողմանի ուսումնասիրության վրա՝ առաջ քաշեց հայ երաժշտության ինքնուրույնության կարեւոր թեզը եւ կանխորոշեց ազգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ուղիները: Նա հայ գեղջուկի երգը մշակեց եւ հասցրեց դասական այնպիսի բարձրության, որ ճանաչելի դարձավ այլ ժողովուրդների կողմից:

Յայ երաժշտական արվեստի պատմության մեջ Կոմիտասը երեւոյթ էր: Կոմպոզիտոր եւ ազգագրագետ, գիտնական եւ երգիչ, խմբավար եւ մանկավարժ՝ նա իր բազմակողմանի գործունեությամբ հսկայական դեր խաղաց մեր ժողովրդի մշակույթի զարգացման գործում:

Սողոմոն Գեւորգի Սողոմոնյանը (Կոմիտաս անունը ստացել է 1883 թվականին, Էջմիածնում, երբ նրան ձեռնադրում են սարկավազ), ծնվել է 1869 թ. սեպտեմբերի 26-ին, Ասիայի Քյոթահիա (Կուտինա) քաղաքում:

Երաժշտագետի համառոտ ինքնակենսագրությունից տեղեկանում ենք, որ Քյոթահիայի հայերը ծագումով զոկեր են, բնիկ Գողթն գավառի Ծղնա գյուղից, 17-րդ դարում նրանք թողել են իրենց հայրենիքը եւ գաղթել Կուտինա:

Չափազանց բարդ ու փոթորկոտ է եղել Կոմիտասի կյանքը: 1881թ. տեղափոխվում է Էջմիածին եւ ընդունվում է Գեւորգյան հոգեւոր ճեմարան: Ունենալով երաժշտական փայլուն տվյալներ եւ հոյակապ ձայն՝ նա ճեմարանում ընդհանուր կրթություն ստանալու հետ զուգահեռ իր գիտելիքները խորացնում է հայ հոգեւոր եւ ժողովրդական երաժշտության մեջ:

1895թ. Խրիմյան Յայրիկի նամակով Կոմիտասը մեկնում է Թիֆլիս՝ երաժշտական ուսումը շարունակելու, ուր անվճար դասեր է առնում Մակար Եկմալյանից, հաճախում է Ներսիսյան դպրոցի երգչախմբի աշխատանքներին:

Խորապես ուսումնասիրելով հայկական ժողովրդական երգի առանձնահատկությունները՝ Կոմիտասը կարողացավ գտնել եւ տեսականորեն հիմնավորել հայկական ժողովրդական երգի



Արմեն Տիգրանյան

մշակման իր նոր մեթոդը:

Կոմիտասի բնորոշմամբ՝ «Երաժշտությունը մի տեսակ շարժողություն է, ինչպես լույսը, ինչպես ջերմությունը: Եվ սա շատ պարզ է, որովհետեւ երաժշտությունը կազմված է ձայներից, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ օդում առաջ եկած շարժումներ, հետեւաբար, մի երգի, մի եղանակի մեջ պետք է տեսնել նախ շարժողություն, այսինքն՝ զգացմունքներ եւ հույզեր: Եվ երաժշտությունը, արտացոլումը լինելով զգացմունքների, մեզ է ներկայանում մերք տխուր, վեհ՝ նայելով այն միջավայրին ուր պարում, զգում եւ արարում է մի ժողովուրդ»:

Նորից ստանալով Վեհափառ Խրիմյան Յայրիկի օրհնությունը եւ նամակ՝ ուղղված մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանին, Կոմիտասը մեկնում է Թիֆլիս: 1896թ. Մանթաշյանի երեք տարվա կրթաթոշակով ուղեւորվում է Բեռլին, որտեղ ընդունվում է Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոմպոզիտորիան, միեւնույն ժամանակ հաճախում է Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի դասընթացներին:

... Ո՞րն է հայ երաժշտությունը, հայկական խազերը, հայ երաժշտության ժամանակը, չափն ու ռիթմը, կապը եւ փոխհարաբերությունը, հայ գեղջուկի պարին բնորոշ հատկանիշները. ահա այն հանգուցային հարցերը, որոնց լուսաբանմանը նվիրեց Կոմիտասը իր գիտությունը, բազմակողմանի հմտությունը, այս բնագավառում լուծելով մի շարք մութ ու կնճռոտ խնդիրներ:

Ավարտելուց հետո՝ 1899թ., Կոմիտասը Բեռլինի կոնսերվատորիայում բազմաթիվ անվանի կոմպոզիտորների ներկայությամբ երեք դասախոսություն է կարդում գերմաներենով՝ նվիրված հայ երաժշտության հարցերին:

Նույն թվականին Կոմիտասը վերադառնում է Էջմիածին եւ շարունակում իր ազգագրագետ-կոմպոզիտորի, խմբավարի անկում եւ բազմաշնորհ աշխատանքը: Այս տարիներին Կոմիտասի ղեկավարած ճեմարանի երգչախումբը հասնում է փայլուն գեղարվեստական-կատարողական արդյունքների, ծավալում է համերգային մեծ գործունեություն: Գեւորգյան ճեմարանի երգչախումբը Կոմի-



Կոմիտաս (Սողոմոն Գեւորգի Սողոմոնյան)

տասի համար ծառայել է նաեւ՝ որպես լաբորատորիա, որտեղ նա ստուգում էր ժողովրդական երգերի մշակման իր ստեղծագործական մտահղացումները:

Կոմպոզիտորի գործունեության բնույթի եւ հոգեւոր կոչման մեջ գոյություն ուներ հակասություն, որը եւ դժվարացնում էր նրա ստեղծագործական աշխատանքի նորմալ ընթացքը: Բարեբախտաբար, Կոմիտասը շրջապատված էր ժամանակի առաջադեմ հայ մտավորականներով, ովքեր օգնում եւ ոգեշնչում էին նրան, որովհետեւ մտահոգված էին հայ ժողովրդի ճակատագրով ու ազգային մշակույթի զարգացման հեռանկարներով: Նրանք էին Յ.Թումանյանն ու Յ.Յոսիանան, Ավ.Իսահակյանը եւ Մ.Աբեյյանը, Ա.Չոպանյանն ու Գ.Լեւոնյանը, Փ.Թերլեմեզյանն ու Ե.Թադեոսյանը:

Կոմիտասը մեծ հույսեր էր կապում Մայր Աթոռին կից երաժշտանոց ստեղծելու իր գաղափարի հետ, որը, դժբախտաբար, չիրականացավ: Այս ընթացքում նա հրավեր է ստանում Կոստանդնուպոլիսից, որտեղ հայ գաղութը խոստանում էր ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները՝ նրա գործունեության ծավալման համար: Կոմիտասը Պոլսում ստեղծում է 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, որի առաջին համերգը տեղի է ունեցել 1910թ. դեկտեմբերի 4-ին: Յամբերգն ունենում է արտակարգ հաջողություն՝ արժանանալով թե՛ հայ, եւ թե՛ օտար մամուլի խանդավառ դրվատանքին:

Կոմիտասի ձեռագրերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կոմպոզիտորը մշտապես մղում է ունեցել դեպի օպերային ժանրը: Յայտնի է նրա աշխատանքը Յ.Թումանյանի «Անուշ» պոեմի վրա, որից մեզ պատահիկներ են հասել: Ինչպես նաեւ հափշտակված է եղել «Սասնա ծռեր» էպոսով:

Նրա խոշոր կտավի գործերի գլուխգործոցը իհարկե Պատարագն է, գրված տղամարդկանց կազմի համար, որը Կոմիտասից պահանջել է ուժերի մեծ լարում եւ երկար տարիների աշխատանք:

Կոմիտասը հանճարեղ արվեստագետի եւ գիտնականի խորաթափանցությամբ ըմբռնեց բազ-

մաձայնության մշակույթում հայ ազգային երաժշտության ձեւավորման մեջ եւ իրավմամբ համարվում է հայ երաժշտության բազմաձայն երգարվեստի հիմնադիրը:

Երգչախմբային արվեստը ժամանակի կենդանի տարեգրությունն է. դա պատմության ձայնն է եւ ժողովրդի ձայնը: Այն արտացոլում է ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրա հոգեւոր կյանքը:

Կոմիտասի մեծագույն ծառայությունը հայ երաժշտության մեջ բազմաձայնության պոլիֆոնիկ սկզբունքի հիմնավորումն էր: Առանձնակի տեղ տալով նրա խմբերգերին, որոնք ցայտուն կերպով արտացոլում են հայկական ժողովրդական երգի ժանրային բազմազանությունը, բնորոշ գծերով պատկերում են հայ գյուղացուն, նրա կյանքն ու կենցաղը:

Կոմիտասը, բնորոշելով հայ ժողովրդական երգերը, այն բաժանում է հետեւյալ տեսակների՝ մանկական երգեր, պարերգեր, դյուցազներգեր, մահերգեր, հարսանեկան-ծիսական երգեր, բնության երգեր: Նրա ստեղծագործական ժառանգության մեջ առանձնակի տեղ են գրվում աշխատանքային ժողովրդական երգերը:

Կոմիտասը սիրով եւ առանձնակի գուրգուրանքով է մոտեցել այդ երգերի մշակմանը եւ ստեղծել է ծիսական-հարսանեկան, սիրային-լիրիկական, հայրենասիրական եւ հոգեւոր երգերի անզուգական խմբերգային պարտիտուրներ:

Ազգային ինքնագիտակցության արթնացման եւ ազգային-հայրենասիրական շարժումների ծավալման շրջանում միաձայն երգեցողությունն այլեւս չէր կարող բավարարել հասարակության պահանջները, ինչքան էլ այն կատարյալ լիներ:

Անհրաժեշտորեն հասունանում էր ժողովրդական զանգվածների կամքի կազմակերպմանը նպաստող նոր ձեւերի օգտագործման հարցը: Այս իմաստով բացառիկ մշակույթում է ստանում խմբակային-բազմաձայն երգեցողությունը եւ նրա սերմանումը լայն զանգվածների շրջանում:

Գրականագիտական

Ցնորական Տերյանը

սկիզբը՝ «Կրթություն» հ. 45

Տերյանը դարաշրջան բացեց բոլոր առումներով՝ նաեւ հայոց տաղաչափության մեջ՝ ամենակայուն ու անփոփոխ թվացող ասպարեզում իսկ ամրապնդելով մի նոր համակարգ: Գայոց տաղաչափությունն իր հիմքում վանկական է, ինչը պայմանավորված է հայերենում բառի շեշտի կայուն դիրքով վերջին վանկի վրա: Այս համակարգի կողքին Տերյանն ամրապնդեց վանկաշեշտական համակարգը, ուր կշռույթային դեր ունի ոչ միայն չափի գործոնը, այլև շեշտի դիրքն ու բանակը: Տերյանը դարձավ վանկաշեշտական համակարգի հիմնադիրն ու անգերազանց վարպետը, որի նորամուծությունների ուղին շարունակեց Չարենցը:

Բանաստեղծ Վեսպերը ներկա է եղել Տերյանի երեսնյան դասախոսությամբ: Տերյանն իր բանաստեղծությունները կարդալուց առաջ ասել է նախաբան խոսք եւ շեշտել, որ ինքը ջանացել է «հայ վանկային <...> պոեզիան դարձնել շեշտային» («Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում», 1964, էջ 334):

«Իմ երգերին» բանաստեղծությունը մտահոգություն է իր ստեղծածի ընդունելության մասին: Դրանք նա բնորոշում է «մեղեդիներ սգավոր» արտահայտությամբ: Սա, իհարկե, ակնարկ է Նարեկացու մեղեդիներին: Սա նաեւ հենց իր պոեզիայի ճիշտ ձեւակերպումն է: Իր արվեստի եւ իր մասին ասույթի սեղմությամբ բանաձեւել է.

Թծես եր արվեստն իմ խնդրն,  
Իսկ կյանքս այնպես դժվարին էր,  
Այնպես միշտ անօգ ու լռին էր,  
Այնպես միշտ մոլոր ու անուռ...

Շատ բազմազան է Տերյանի պոեզիայի գունային երկնազիրը: Ամեն ինչ տրամադրության խորհրդանշան է: Ըստ այդմ՝ շուշանն անգամ կարող է լինել սեւ, իսկ խավարը՝ ոսկեհուր: Իշխող են եւ՝ մուգ, սեւ գույները, եւ՝ լուսավոր, սպիտակ: Անպակաս է կապույտը: Ահա գունային անցումների մի պատկեր.

Եվ հայացքը ոսկեհուր  
Մթնում իմ սեւ գիշերվա,  
Իր անսահման, իր մաքուր  
Լույսն է փռում իմ վրա:

Ոսկեհուր հայացք, սեւ գիշերվա մութ, մաքուր լույս... «Պետերբուրգ» տնետում ստեղծել է այսպիսի մի պատկեր, որ նաեւ գունային հավաստիություն է՝ «ցուրտ կրակներ», եւ այս հակադրությամբ ստեղծված պատկերը միանգամայն տեսանելի է հյուսիսային քաղաքի սառը մառախուղների մեջ:

Պատկերի միջուկ հանդիսացող շատ բառեր կան, երբ միջուկը ձեռքվում, ու պատկերն առկայծում է: Այդ միջուկ բառերից է նաեւ բամին, որ մարդկային կերպարանք է ստանում եւ ստեղծում այսպիսի պատկեր. «Քո սիրտն էլ արդյոք ցավում է, // Քամի՛, երբ լալիս ես խուլ...»:

Տերյանի արվեստի առանձնահատկություններից է իմաստակիր բառի ուժգնությունը ոչ թե էներգետիկայով, այլ ներգործման հանդիսավոր տեսականությամբ: Ինչպես՝ «Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք, // Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անսահման...»:

Կամ՝  
Բյուր մարդոց մեջ,  
Պաղ մարդոց մեջ,  
Որպես տրտում  
Անապատում-  
Սենակություն,  
Սենակություն...

Կամ՝  
Եվ գրությունը քո քրոջական  
Սիրտը կըլցնե խնդրության լույսով,  
Քո սուրբ ծնկները կըգրկեն հուսով  
Եվ կըհեկեկան, եւ կըհեկեկան...

«Մոռանալ», «հեռանալ» բառերի առանցքային կրկնաբերումով է գրված «Մոռանալ, մոռանալ ամեն ինչ, // Ամենին

մոռանալ» բանաստեղծությունը: Համարնույթ այլ օրինակներ՝ «Գեկեկում է անվերջ...», «Օ՛, կգան օրեր ավելի տրտում // Ու դժնի, դժնի, առավել դժնի...», «Սեւերով, սեւերով կըպատեն...»:

Տերյանի կրկնաբերումները ոչ միայն բառային են, այլև տողային: Իմաստակիր տողը կարող է կրկնվել բոլոր տներում: Այդպիսին է «Ինքնօրորում»-ը:

Տերյանի պատկերները որքան վերացական են, նույնքան նաեւ տեղային են ու առարկայական: Ամեն մի ժամանակաշրջանի համեմատությունների իր աշխարհն ունի՝ բնություն, կենդանիներ, աշխարհագրական տարածություններ՝ սար, քար, ծով, գետ... Տերյանը դեռ կտրված չէ անցյալի գիրկն անցնող այդ հատկանշաներից: Դեռ ավելին՝ երբեմն շատ տեսանելի է. Ահա «Մթնշաղի ամուրջներ» շարքի 5-րդ բանաստեղծության առաջին տունը.

Սարի ետեւում շողերը մեռան.  
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ.  
Տխուր երեկոն գարկել է վրան.

-Սիրտը կարոտով կանչում է քեզ, եկ:

Հայոց բնաշխարհն է՝ սարերի ետեւում մայր մտնող արեգակ, մարող շողեր, սարերին ու դաշտերին իջնող իրիկնային մշուշ եւ հանկարծ՝ «Տխուր երեկոն գարկել է վրան»: Այս վրանը բլուրների վրա իջած քողն է, եւ որը նախորդ տողում ունի իր պատասխանը՝ «Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ» եւ, հետեւաբար, ամեն ինչ պատված է կապույտով: «Կապույտ վրան» պատկերն առարկայորեն դառնում է տեսանելի: Այլ բանաստեղծություններում պատկերը լրացվում է առարկայորեն՝ դաշտերի վրա իջնող թափանցիկ մութի մանվածք, պարզ ջրերի վրա անդողոջ կանգնած եղեգն: Ընդհանրապես Տերյանի բնաշխարհի պատկերներից հաճախակի են իջվում սարերը, սարերից կարկաչով իջնող աղբյուրները, դալուկ դաշտերը:

Հիշյալ տան մեջ պատասխան կարող է պահանջել նաեւ «տխուր» մակդիրը. ինչո՞ւ է երեկոն տխուր: Նախ տխրությունը Տերյանի պոեզիայի գերակա տրամադրությունն է, որ այստեղ ծուլվում է իրիկնային ավարտվող օրվան, որ իրաժեշտ է, մի փոքր մահ եւ ապա տխրության հոգեբանական նախադրյալն սպասումն է՝ «Սիրտս կարոտով կանչում է քեզ, եկ»: Բանաստեղծը շատ լավ գիտի, որ կարոտի կանչը մնալու է անպատասխան, անհասանելի ցնորք աղջիկը չի դառնալու հասանելի: Այստեղից էլ խորացող տխրությունը, որ ծավալվում է մյուս երեք տներում: Ավելանում են վարսաթափ ուռին ու դողոջուն եղեգնը, փակվող ծաղիկներն ու երկնքում վառվող աստղերը, այսինքն՝ օրը դանդաղ մթնում է եւ սպասումն արդեն դառնում է «սեւ տազանապ»: Կարոտի կանչը՝ «Սիրտը կարոտով կանչում է քեզ, եկ», վերածվում է անպատասխան հռետորական հարցի՝ «Արդյոք ո՞ւր ես դու, իմ անուշ երագ»: Օրը մթնում է, գիշերն է անցնում եւ սպասումն արդեն իսկ վերածվում է միայնության հոգեվիճակի: Ամփոփիչ չորրորդ տունը դառնում է այս խորացող դրամայի ողբերգական ավարտը.

Սիրտ իմ, այդ ո՞ւր ես դու իզուր կանչում,  
Տես՝ գիշերն անցավ, աստղերը մեռան,  
Սենավոր իմ սիրտ, մոլորված թռչուն,  
Կարոտիդ կանչը չի հասնի նրան...

Ահա մի բանաստեղծություն, որ տեսանելի է եւ՝ «մերսից», եւ՝ «դրսից», որի եւ՝ «արտաքին» շերտն է երեւում, եւ՝ «ներքին»:

Տերյանի բառը միշտ տեղին է: «Երեկո» (1908) բանաստեղծության մեջ օգտագործել է «տխարալուկ» բառը՝ «Կրծքիս դիր դեմքը քո տխարալուկ»: Այս բառից պետք է ծնվեր Չարենցի առաջին գրքի վերնագիրը՝ «Երեք երգ տխարալուկ աղջկան» (1914): Արտառոց կարող է թվալ, ասենք, այսպիսի բառի օգտագործումը՝ «Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին»: Անդրադարձը՝ ժայռը, բնականորեն, վայրի է լինում, ավելորդ կամ անտեղի չէ՞ այդ բառը:



Բառի ընկալումը շատ ենթակայական է, առավել եւս գեղարվեստական խոսքում: Անգամ սովորական անհատական գիտակցության մեջ է այն տարբեր, էլ ո՛ր մնաց խորապես ինքնատիպ բանաստեղծական այնպիսի համակարգում, որպիսին Տերյանի պոեզիան է:

Ահա մեկ օրինակ կյանքի փաստից: Ուսուցիչն աշակերտներին դիմում է՝ թվարկե՛ք բառեր, որոնք ունենան ուրախ իմաստ: Այլեւայլ պատասխանների հետ մի աշակերտ ասում է՝ «Ճանապարհ», եւ ինչո՞ւ հարցին հավելում որովհետեւ ճանապարհով հայրիկս ամեն տարեվերջին արտագնա աշխատանքից տուն է վերադառնում: Ուսուցիչը պահանջում է թվարկել տխուր բովանդակություն ունեցող բառեր, եւ նույն այս աշակերտը տալիս է նույն պատասխանը՝ «Ճանապարհ» ու բացատրում, որովհետեւ հայրիկս եկած ճանապարհով գնա՛ց, գնա՛ց ու այլեւս չվերադարձավ:

Այսպես խորապես անհատական է բառը Տերյանի համակարգում՝ հենց թեկուզ «մթնշաղ» եւ «անուրջ»:

«Մթնշաղը» Կարինի բարբառում տարածված էր, կար ժողովրդախոսակցական բառապաշարի մեջ. Տերյանն այն գրականացրեց եւ դրեց չափազանց գրական, գրեթե չօգտագործվող այնպիսի մի բառի կողքին՝ որպիսին «անուրջն» է: Այս բառերը լիցքավորվեցին խորապես անհատական արդյունքով եւ դարձան ոչ միայն վերնագիր (գրքի, շարքի), այլև բանաստեղծական համակարգի գեղարվեստական միջուկ իրենց շրջայական ճեղքումներով:

Այդպես նաեւ՝ «ցնորք», «տեսիլք», «աշուն», «միայնություն», «թախիծ»...

Բառի խորապես անհատական ընկալումը կարելի է ցույց տալ երկու համակարգերի համեմատությամբ. Թումանյանի ժողովրդախոսակցական լեզվում շատ սովորական, անգամ շատ հարազատ է հնչում դիմելու «աղջի» ձևը՝ «աղջի, Անուշ»: Տերյանը երբեք «աղջի» չի ասի, քանի որ իր բարձրաշխարհիկ գրական լեզվի համակարգը կավերվի, լավագույն դեպքում նա կարող է օգտագործել «աղջիկ» բառաձևը եւ այն էլ ոչ թե դիմելիս, այլ խոսքի նկարագրական պատկերաշարում:

Տերյանը երգեցիկ բանաստեղծությունը հասցրեց անթերի կատարելության: Հայերենի վանկական համակարգին, ինչպես արդեն նշեցինք, ավելացրեց վանկաշեշտական համակարգը, երբ տողերը չափական կշռույթի են հասնում ոչ թե սուկ վանկերի հավասարությամբ, այլ կայուն դիրքերում գտնվող շեշտերի: Այստեղ արդեն ոչ

թե բարդ ոտքերի համաչափությունն է, այլ պարզ ոտքերի՝ հիմնականում անապետության եռավանկ, վերջին շեշտով: Սրան էլ ավելանում է հանգերի հարուստ հնչեղությունը, երբեմն նաեւ առձայնույթն ու բաղաձայնույթն եւ խոսքի կախարհաբեր պատրաստ է:

Ոչ տրտունց, ոչ մրմունց սգավոր,  
Գեռացի, մոռացի ինձ հավետ.  
Իմ ուրիմ միշտ մթին, մեծավոր,  
Կըզնամ իմ դժկամ ցավի հետ:

Սա երգ է, եւ այս երգի մեղեդին բառերի կշռույթի մեջ է: Յուրաքանչյուր տուն բաղկացած է ինը վանկից՝ 9=3+3+3, կիրառված է անապետյան ոտք, ինչն էլ տողերն օժտել է երեքական ոչ միայն բառային, այլև կշռույթային շեշտով: Ավելացնենք, որ կշռույթային շեշտը շատ ավելի զորավոր է, քան բառայինը եւ հարկ եղած դեպքում կարող է անգամ բառերը կիսել:

Տերյանի հանգը, հանգագիտությունը, խոսքի ծայնակարգությունը եւս առանձնացող է: Հնչյունների նրբագեղությունը մշտապես վերածվում է նույնաձայն մեղեդու, առավել չափով բաղաձայնույթի («Շունկ ու շրշուն»): Հնչյուն խոսքի մեղմ ներդաշնակության Տերյանը խուսափում է ցայտուն հանգաբանությունից:

Առանձին խոսակցության նյութ է Տերյանի լեզուն: Լեզուն որպես ոչ թե սուկ տեղեկատվության, այլ գեղարվեստական հաղորդակցության միջոց, այլ կերպ որպես պատկերային մտածողության համակարգ, որ ստեղծում է իր ոճական ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը: Լեզվական բյուրեղյա մաքրությամբ, ինչպես ամենամաքուր աղամանը, Տերյանի լեզուն արել էյան աշխարհաբարի բարձրակետն է: Այդ լեզուն գեղարվեստական լեզու է դառնում նրա որոշակի գեղագիտությամբ, ինչն էլ ստեղծում է նրա բանավեպը, օտար բառով պոետիկան: Այդ ամենն ստանում է որոշակի ձեւ եւ բովանդակություն, ինչն էլ դառնում է նրա խոսքի ոճը եւ ստեղծում է իր անհատական կնիքը:

Տերյանի բանաստեղծական լեզուն ունի առանձնահատուկ դյութանք, գրավիչ կախարհաբեր: Եվ պարզ է, եւ՝ խոր: Ինքն էր ասում՝ «Սիրում եմ պարզկա քո լեզուն». այս «պարզկան» նրա համար նաեւ արքայական էր: Լեզուն Տերյանը համարում էր ազգի կրթվածության ցուցանիշը: Ըստ այդ ճիշտ գիտակցության՝ Տերյանն իր լեզվով ոչ միայն կրթեց, այլև հիմնավորապես բերեկրթեց հայ ընթերցողին:

շարունակությունը՝ էջ 7

### Ցնորական Տերյանը

սկիզբը՝ էջ 6

Անհնար է խոսել Տերյանի արվեստի մասին եւ չանդրադառնալ նրա **խոսքի արտակարգ ներդաշնակ ճարտարապետությունը**: Տերյանի յուրաքանչյուր բանաստեղծություն ունի իր **ճարտարապետական կառույցը**: Այդպես իր ճարտարապետությունն ունի երաժշտական ցանկացած ստեղծագործություն՝ լինի համանվագ թե երգ: Տերյանի պոեզիայի ճարտարապետությունը երաժշտականացված է՝ բառերի հնչյունն ու մեղեդին լսվում է: Կառույցի ճարտարապետական հիմքը սրտահույզ ներդաշնակությունն է, համաչափությունը, մասերի դասավորությունը:

Սասունցի Դավիթը կոչվում է Սարա Մելիքի դեմ: Ձեռքբերակի բախում. այդ պատմությունն ունկնդրող երեխան ասում է. «*Ես կովի ծայրը լսում եմ, ես այդ կովը տեսնում եմ*»: Այսպես վերացականը նյութականանում է եւ ընկալվում:

Այդպես է նաեւ Տերյանի պոեզիայում. կարողավոլ կամ ունկնդրելով՝ եւ տեսնում ես, եւ լսում: Տեսնում ես քնարական հերոսին, նրա քայլվածքը, անգամ դեմքի արտահայտությունը, աչքերի տիրությունը, տեսնում ես քնարական հերոսուհուն՝ կարծես կիսամշուշի մեջ, հեռու, անհասանելի եւ գրավիչ, այնուհետ, կախարհիչ: Լսում ես մանրամաղ, անպայման մանրամաղ եւ ոչ թե հորդառատ անձրեւի կաթկաթոցը, ընկնող տերեւի շրշույնը, աշնանային սառը ջրերի սահքը, հերոսի հառաչքը, հերոսուհու քար լուռության անդրադարձը... Սրանք բոլորը ծայրեր են, որ լսողական ընկալմամբ գեղարվեստական պատկերը վերածում են երաժշտության եւ խոսքը հասցնում նախ նկարչական՝ գունագծային, ձեւակառուցվածքային եւ դրան հանընթաց ձայնային, երաժշտական անմնացորդ ներգործության:

Այսպիսով Տերյանի բանաստեղծությունը կարողավոլ կամ ունկնդրելով՝ նաեւ տեսնում ու լսում են այդ բանաստեղծությունը:

Այս ամենը քաղաքակրթության անցած ճանապարհի արտահայտությունն է բանաստեղծության տեսքով: 19-րդ դարում երաժշտության աշխարհում իշխում էին պատարագը, ռեպլիկան, սիմֆոնիան, օպերան եւ երգը: 20-րդ դարում մնացին սիմֆոնիան, օպերան եւ երգը, 21-րդ դարն առավել հակված է երգին:

Այստեղ եւ հոգեւորն է, եւ աշխարհիկը, եւ ինտելեկտուալը: Տերյանն իր երաժշտական լսողությունն ու հակումներն ի մի բերեց, խտացրեց երգի մեջ: Նրա յուրաքանչյուր բանաստեղծություն երգ է, ավելի որոշակի՝ եղերերգ, որ օտար բառով էլեգիան է:

Նույն կերպ՝ 19-րդ դարը քաղաքների հզորացման ժամանակ էր, 20-րդ դարը՝ նախ ճարտարապետական թռիչքների եւ ապա՝ քաղաքաշինության բուռն զարգացման, որը շարունակվում է 21-րդ դարում: Տերյանը ճարտարապետական կառույցների բանաստեղծ է: Նրա յուրաքանչյուր բանաստեղծություն մի մի ճարտարապետական կորոլ է:

Տերյանը նաեւ **լուռության բանաստեղծ է**: Լուռության խորհրդանշանը սֆինքսն է՝ լսում է ու չի լսում, ասես ոչ թե քարե արձան է, այլ տիեզերական ձայների առջեւ քարացած անապատի ոգի, որ աշխարհի բախտի համար աղոթք է մրմնջում առ Աստված: Լսում է, բայց չի խոսում, ասես հենց նոր համարացել է տիեզերական հարվածից՝ լինի որոտ, կայծակ, թե Աստծու պատիժ: «*Լռությունը ոսկի է*» ասույթը ինչքան հարազատ է սֆինքսին, նույնքան այլեւայլ մեկնաբանությունների պահանջ ունի:

Տերյանի պոեզիայում հաճախակի օգտագործվող բառերից մեկը հենց **լուռությունն** է՝ լուռություն սիրո պահին, լուռություն միայնության պահին, լուռություն մահվան պահին, լուռություն լուռության մեջ: Լուռությունը նրա քնարական հերոսի կենսակերպն է, հոգեկան անդորրի ցանկալի միջավանդ: Նրա հոգեկան հիմնական վիճակը ներկայացնող

թախիծը ինքնին արդեն լուռություն է: Անապատի սֆինքսն ասես նույն կեցվածքով նստած է նրա պոեզիայում: Ինքն է հուշում՝ «*Կըլեռն, որպես քարն է լուռում*».

*Եթե սեր չըկա - ինչի՞ համար Պիտի չարչարվեն չար աշխարհում- Կըզման հողի գիրկը խավար, Կըլեռն, որպես քարն է լուռում. Եվ ինձ թող ծաղրե երկինքը ցուրտ, Երկիրը տոնե խնջույք ազահ- Եթե աստղերում չըկա խորհուրդ, Եթե աղոթքըս լսող չըկա...*

Ասես Տերյանն իր հերթին ապահովում է համաշխարհային քաղաքակրթության տիեզերական կապը. այնտեղ անապատի ոգին է քարե արձան դարձել, այստեղ՝ սիրո ծարավի բանաստեղծական ոգին:


Սարդը խոսում արարած է եւ լուռ է սուկ իրեն տանող-կլանող այնպիսի իրավիճակների մեջ, որպիսին են աշխատանքը, երաժշտությունը, իմաստուն խոսքը... Աշխատավոր մարդը լուռ է, եւ դա ոչ միայն հոգնությունից է, այլ նաեւ նրանից, որ աշխատելիս ամբողջ օրը մտքով խոսել է. գյուղացին՝ հողի ու ջրի, ծառի ու ծաղիկի, վարորդը՝ ճանապարհի, գիտնականը՝ իր թիվ ու հաշիվների հետ... Երաժշտությունը դյուքուն-կախարդում եւ իր հնչյուններով պարուրում է մարդու, դարձնում անշարժ՝ համակ լսողություն: Այդպես կարող է օժն իր ֆշշոցով քարացնել մարդու: Իմաստուն խոսքը լռեցնում է՝ համրացնելու աստիճանի, մարդուն դարձնում ընդունող, ընկալող եւ ոչ թե վերարտադրող, երբեմն հասցնում է հափշտակվածության, զմայլանքի, սքանչացման աստիճանի, զգում հիպնոսի ու հոգեզալարքների մեջ, մատնում խոսքի արբեցության:

Գռեհիկ ու կոպիտ իրականության մեջ, որն այլաշխարհային եզերքների ձգտումներով ամեն կերպ պետք է հաղթահարվեր, Տերյանի լուռությունը չհասկացված լինելու վտանգից է, չընկալված-չճանաչված մնալու տրագիկոմիայից, այդ իսկ պատճառով ծիծաղելի դառնալու եւ ծանակվելու զգայուն վիրավորանքից: Տերյանի լուռության մեջ արդոք կա: Իսկ աղոթքը բարձրաձայն չի լինում, առավելագույն դեպքում շշուռ է: Աղոթքը գեղարվեստական խոսքի այն բարձրագույն աստիճանն էր, ինչին ձգտում էին խորհրդապաշտները: Տերյանի լուռությունը աղոթքի վերածված խոսքի լուռություն է:

Տերյանը վերանայեց կյանքին ուղղված իմաստային այնպիսի հիմնաբառեր, որպիսիք են **ճիշտն ու սխալը**: Այդ հասկացությունները նրա բանաստեղծական համակարգում դարձան **նուրբ եւ կոպիտ**: Սա ոչ թե բառերի պարզ տեղաշարժ է, այլ մի ամբողջ հայեցակարգային փոփոխություն: Ի վերջո, ճիշտն ու սխալը հարաբերական հասկացություններ են, իսկ նուրբն ու կոպիտը՝ համեմատաբար իրական: Մխալ, կեղծ, բազմատեսակ հակասություններ ունեցող կյանքը նրա համար գռեհիկ իրականություն է, եւ քանի որ հնարավոր չէ այն ուղղել, ուրեմն պետք է հեռանալ մի ճիշտ աշխարհ (ինչը հիշեցնում է ուտոպիան), իսկ այդ ճիշտ աշխարհը նուրբն է, երազայինն է, տեսլականն է, ցնորականն է ու անհասանելին...

### ԺԲ. Տերյան եւ Չարենց

Չարենց իմանալը, Չարենց հաղթահարելը հեշտ բան չէ. դա գրականագիտության մի ամբողջ չհաղթահարված բնագավառ է՝ անգամ «*գիտունների*» համար: Չարենցագիտության ճանապարհին այնքան մասնագետ է սայթաթել, այնքան գրիչ է կոտրվել: Այդպես է, որովհետեւ չկա Չարենցի ամբողջական, համահավաք, համակողմանի ընկալում: Մեկի համար Չարենցն սկսվում է «*Ամբոխները խելագարված*»-ով եւ ավարտվում «*Տաղարան*»-ով, մյուսին կաշուն գաղափարի պես դեռես ուղեկցում են Լենինյան մտփվները: Վերջերս ես մի նոր հողված տպագրեցի «*Լենինն ու Վլին*» պոեմի նոր մեկնաբանությամբ: Խնդրեմ, կար-



դացեք: Չարենցին ճիշտ չընկալելուց էլ գալիս են առանձին արտահայտությունների շուրջ հաճախակի հնչող անհիմն, ուստի-եւ սխալ դատողությունները, դրանց ուղեկցող անտեղի ու անպատեհ մեկնաբանությունները, բառապաշարը, այս դեպքում «*սնափառություն*», «*փառասեր*», «*մարմաջ*» եւ այլն: Նույնն է, որ մտնես եկեղեցի ու հայիոյես Աստծուն: Մեծերի մասին այդպես հավակնոտ չեն խոսում, մեծերին փորձում են հասկանալ:

Եվ Տերյանը, եւ Չարենցը կոմունիստներ էին: Իր վերջին բանաստեղծություններում Տերյանը ողջունում է Գոկտեմբերյան հեղափոխությունը, աշխարհը հեղաշրջող տարերքը՝ «*Գոկտեմբերին*», «*Ստեփան Շահունյանին*», «*Քեզ եմ երգում, կարմիր...*», «*Հարյավ հավես, հարյավ հոգին իմ որբ...*», «*Եկավ երկաթ քայլով...*», «*Ել, դեմոկրատիա...*», «*Չարդեցեք անդու, անգուռ, անխնա...*» եւ այլն: Տերյանն անգամ նոր ժամանակների բանաստեղծական միտումներին է արձագանքում: Եթե որեւէ մեկը, առանց հեղինակին իմանալու, կարդա «*Մեր ավտոն...*» բանաստեղծությունը, ամենեւին չի մտածի, որ Տերյանն այդպիսի բանաստեղծություն է գրել: Կմտածի՝ 1922-1924 թվականների Չարենցն է, անգամ Վշտունին կամ Աբովը...

Անտեղի է բանաստեղծներին մեղադրել նրանց քաղաքական կողմնորոշման համար: Տերյանն ինքը դարձավ այդ կողմնորոշման առաջին զոհը: Խոսքը վերջին ուղեւորության մասին է: Ուղարկողները հաստատ գիտեին, որ Տերյանը գնում է մեռնելու: Բայց նա մինչեւ ճանապարհ ընկնելը՝ 1919-ին տեսեք թե ինչ է գրում մտերիմներին «*Օրինյալ լինես, Գոկտեմբեր, որ այսքան ոգեւորություն ես ներշնչում անգամ ինձ նման անդամալույծներին*» (1919, հոկտեմբեր), «*Ես ինձ լուսավոր ու ջինջ եմ զգում, ինչպես հավանորեն իրենց զգում էին առաջին քրիստոնյաները*» (1919, հոկտեմբեր-նոյեմբեր):

Չարենցը ողջունեց հեղափոխությունը, անգամ կարմիր բանաստեղծի հովելը ընդունեց, կարճ ժամանակ անց կասկածեց, հետո զղջաց իր ոգեւորության համար եւ հեղափոխության բանաստեղծ դարձավ ընդդիմադիր, հռչակվեց ժողովրդի թշնամի, ձերբակալվեց ու մեռավ բանտում:

Բոլոր հեղափոխություններն առաջին փուլում միշտ էլ խոստումնալից են: Դետո է, որ երեսուն է հեղափոխության բուն դեմքը: Եվ այսպես, ինչպես արդեն նշել եմ, բոլոր հեղափոխություն-իշխանափոխություն-հեղաշրջումներն անցնում են երեք հիմնական փուլ՝ ա) խելոքները մտածում են կյանքը փոխելու մասին, բ) նվիրյալները փոխում են կյանքը, գ) սրիկաները վայելում են այդ փոխված կյանքի պտուղները: Որպես օրենք՝ յուրաքանչյուր հեղափոխությունից հետո ընկնում է կենսամակարդակը, քանկանում է կյանքը, սին խոստումները չեն իրագործվում, նախկին ունեւորներին փո-

խարհում են նոր՝ ավելի բթամիտ ու հանցավոր դեմքեր: Ժողովուրդը սուկ միջոց է, նրա անունից խոսում են, նրան ոտքի հանում, հետո թողնում չոր գետնին նստած, իսկ դժգոհներին հռչակում են հեղափոխության հակառակորդ, ժողովրդի թշնամի ու ոչնչացնում:

Տերյանը նախկինում եղել էր ԴՅԳ անդամ, հետո անդամագրվեց սպեցիֆիկներին, այնուհետեւ կոմունիստական կուսակցությանը եւ ազգությունների խորհուրդում պաշտոնյա էր, անմիջական շփումների մեջ էր Լենինի, Ստալինի եւ մյուսների հետ: Եթե ավարել վստահորեն հրաժեշտ կտար մթնշաղի անուրջներին եւ նոր ժամանակների պահանջներին համապատասխան նոր պոեզիա կստեղծեր, մի բան, ինչի գաղափարախոսությունն արդեն իսկ կար նրա «*Հայ գրականության գալիք օրը*» գեկուցման մեջ, իսկ մարմնավորումը՝ վերջին տարիների բանաստեղծությունների: Դրանով իսկ կդառնար նոր ժամանակների գրական առաջնորդը:

Այստեղ մի ծավալուն միջարկում: Տերյանը խորհրդապաշտական գրականության, գեղագիտության եւ տեսության համակարգի մեջ էր: Բայց լինելով շրջահայաց եւ գրական գարգացումների հանդեպ զգայուն՝ ուներ իր գրական ժամանակի ամբողջական ընկալում եւ հետեւում էր նորություններին:

Կարդում էր ֆրոյդիստական գրականություն, անտարբեր չէր ապագապաշտներին գործունեության հանդեպ: Մի տեղ գրում է. «*Իսկ ես կարդում էի Պշիբիշեւսկու «De profundis»-ը (III, 212): Ստանիսլավ Պշիբիշեւսկին (1868-1927) լեհ գրող էր, «De profundis» վեպը սիրային նամակներով ֆրոյդիստական հոգեվերլուծական գրականություն էր (Վ. Պարտիզոնին տվել է խուսափողական եւ հեռու բացատրություն՝ «...ունի վեպ»՝ «Երկրի որդիներ», բայց հարցնող լինի, ինչ կապ ունի մեկը մյուսի հետ»): Այս գրողի վեպերը դպրոցական տարիքում Չարենցը եւս պիտի կարդար՝ արտացոլեր իր «Homo sapiens» չափածո նովելում, նաեւ մտապահեր, որ ավելի ուշ՝ 1927-ի առաջին օրերին՝ կնոջ մահվան անմիջական տպավորություններով բանտում գրեր «De profundis» պոեմն ու հետո այրեր:*

Տերյանի աչքի առջեւ էին նաեւ ապագապաշտները, որոնց հանդեսներից մեկին, ինչպես արդեն ակնարկել եմ, ներկա է եղել Պետրոգրադի «Թափառող շուն» սրճարանում: Այնպես որ, Տերյանը շարունակվում էր. մենք 1920-ականներին կունենալինք մի նոր Տերյան, եթե վաղաժամ մահը չկտրեր նրա կյանքի ուղին:

Այն, ինչ չհասցրեց անել Տերյանը, արեց Չարենցը:

(շարունակելի)

Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատանիներ հայ երգչախմբային արվեստի պատմության էջերից

Սկզբը՝ էջ 5

Եվ այսպես, 1958թ. մարտին, 33 Կառավարության որոշմամբ, Հայաստանում հիմնադրվեց երգչախմբային ընկերությունը: Այս փաստը երեւոյթ էր մեր հանրապետության կյանքում բազմաձայն երգեցողության տարածմանը նպաստելու, մանուկների և երիտասարդների գեղագիտական դաստիարակությանն ժամանակելու փաստը, մի իրողություն, հիմնադրում հասարակական մշակութային մի կազմակերպության, որն իր հովանու տակ պիտի առներ ազգային խմբակային երգը՝ հետագայում այն զարգացնելու, համրահեղակելու լուրջ առաքելությունը:

Հայաստանի երգչախմբային ընկերության նախագահ է ընտրվում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր, տաղանդավոր խմբավար Թաթուլ Ալթունյանը: Մի արվեստագետ, մեր մշակույթի ակնավոր գործիչ, քաղաքացի, ով հայ իրականության մեջ երկու պրոֆեսիոնալ ստեղծագործական կուլեկտիվների հիմնադիրը և գեղարվեստական ղեկավարը հանդիսացավ Հայաստանի Պետական երգչախմբի և պետական երգի և պարի անսամբլի:

ՅԵԸ նախագահության առաջին անդամներն էին խմբավարներ, կոմպոզիտորներ, երաժշտագետներ, երգիչներ Մարտին Մազմանյանը, Կարո Ջաքարյանը, Էմմա Ծատուրյանը, Հովհաննես Վե-

րանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էրվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը, Երվանդ Սահարունին, Ջենն Գյոզայանը, Ռոբերտ Աթայանը, Ազատ Շիշյանը, Էրվարդ Կարթոմյանը:

Ընկերության ստեղծումից մեկ տարի անց հիմնադրվեցին ընկերության բաժանմունքներ Լեռնականանում, Կիրովականում, Ղափանում, Գիլիջանում, Արտաշատում, Եղեգնաձորում, Ազիզբեկովում:

Մեծն Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի 100-ամյա հոբելյաններին նվիրված և հետագայում պարբերաբար անց էին կացվում մանկական, երիտասարդական, սիրողական երգչախմբերի հանրապետական մրցույթներ, փառատոներ, քաղաքային և հանրապետական երգի տոներ:

Երեւան քաղաքի 2750-ամյակին նվիրված հանրապետական երգի տոնի միացյալ երգչախմբում երգում էին 5000 մասնակից: Իսկ տոնի համար որպես հատուկ խմբերգ զրեց տաղանդավոր կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը պետ Պարույր Սեւակի խոսքերով: Դա «Երեւան-Երեւուհի» երգն էր:

1977թ. երեւանում շահագործման հանձնվեց հմբերգային արտիստի տունը 290 տեղ համերգային դահլիճով, որտեղ յուրաքանչյուր տարի անց են կազմվում երգչախմբերի հանրապետական մրցույթներ, համերգներ:

Մեծն Կոմիտասի հոբելյանական 150-ամյակին նվիրված «Եր-



Թաթուլ Ալթունյան

գող Հայաստան» թվով տասներորդ հանրապետական մրցույթին մասնակցում էին Երեւանի մարզերի և Արցախի ավելի քան հարյուր երգչախմբեր:

1987թ. երգչախմբային ընկերությունը վերանվանվեց երաժշտականի, ընդլայնվեց հասարակական-մշակութային կազմակերպության շրջանակները միավորելով հանրապետական երաժշտական մշակույթի գործիչների, պրոֆեսիոնալ և սիրողական տարբեր ժանրի երաժիշտների, մանկավարժների, գեղագիտական ինքնագործունեության մասնակիցների:

Հայաստանի երաժշտական ընկերությունը նպաստում է ազգային երաժշտության պահպանմանը, հիմնվելով հարուստ ավան-



Էմմա Ծատուրյան

դույթների և համաշխարհային մշակույթի վրա, կազմակերպում և անց է կացնում մրցույթներ, փառատոներ, սեմինարներ, վարպետաց դասեր, ստեղծագործական մեծարման հուշ երեկոներ, իրականացնում է հրատարակչական գործունեությունը 20-ից ավել մենագրություններ, մեթոդական ձեռնարկներ, հայ կոմպոզիտորների խմբերգերի ժողովածուներ:

Արվեստի ոգեցորում, հուզում, ոգեշնչում և մխիթարում է մարդուն, նրան է վիճակված հատուկ դաստիարակչական մեծ դերը, որը և արվեստի իսկական կոչումն է: Դարերով երագած մեր պետության անկախացումից հետո, երբ հանրապետությունը ապրեց ճգնաժամային տարիներ, մեր մշակույթը, արվեստը և արվես-



Դավիթ Ղազարյան

տագետները հայտնվեցին անելանելի վիճակում իսկ այսօր վերհառնելով մենք կերտում ենք մեր ապագան:

Եվ հատկապես՝ երգչախմբային արվեստը, հսկայական դեր է խաղում ազգային ինքնատիպ ոճի ձեւավորման գործում:

Որպես ազգային մշակույթի կարեւորագույն բաղկացուցիչ, երգչախմբային արվեստն իր հայրենասիրական բնույթով և միավորելու ու համախմբելու ուժով հայ երաժշտության պատմության մեջ միշտ ունեցել է, ունի և պետք է ունենա որոշակի դերակատարություն:

Դավիթ ՂԱԾՈՐՅԱՆ  
Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, Պրոֆեսոր

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Արտամենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կերպարվեստի, տեխնոլոգիայի (տղաների խումբ), ֆիզիկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ղեկտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Նոր Արտամենի միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Նոր Արտամեն, 1-ին փ. 3-րդ փակուղի 5: Տեղեկությունների համար զանգահարել՝ (099) 92-19-59, (033) 30-83-38 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի Ռ. Աբաջյանի անվան հ. 147 դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ղեկտեմբերի 3-ին՝ ժամը 13:00-ին, Երեւանի Ռ. Աբաջյանի անվան հ. 147 դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Կ. Ուլենցի 1: Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 24-50-20, (091) 48-46-49 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Սրգաշատի Կ. Ափոյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ղեկտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Սրգաշատի Կ. Ափոյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Սրգաշատ, 5-րդ փ., 15 շ: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 00-06-34 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ղեկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին, Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 75-55-56 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սեյնոնովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկուլտուրայի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ղեկտեմբերի 2-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեյնոնովկայի հիմնական դպրոցում, հասցեն՝ գ. Սեյնոնովկա, 1-ին փ., շ. 78: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 26-25-31 հեռախոսահամարով:



### «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար մրցույթ

«Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ԵՊՀ կառավարիչ-ռեկտորի (այսուհետ՝ ռեկտորի) թափուր պաշտոնի համալրման համար հայտարարում է բաց մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել գիտական աստիճան եւ առնվազն 5 տարվա ակադեմիական ու գիտական գործունեության ստաժ ունեցող անձինք:

Ռեկտորի թափուր պաշտոնի համալրման մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ ա) հավակնորդի ինքնառաջադրման դեպքում՝ գրավոր դիմում, իսկ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ ստորաբաժանումն համապատասխան որոշումը եւ հավակնորդի գրավոր համաձայնությունը,

բ) լուսանկար,

գ) ինքնակենսագրություն/ռեզյումե,

դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենը, առնվազն 5 տարվա ակադեմիական եւ գիտական գործունեության ստաժը հավաստող փաստաթղթեր (աշխատանքային գրքույկի պատճենը կամ տեղեկանք աշխատանքի վայրից),

ե) հավակնորդի գործունեության ծրագիրը՝ փակ եւ կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

«գ», «դ» եւ «ե» ենթակետերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են նաեւ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին PDF ձևաչափով, էլեկտրոնային փոստի միջոցով՝ [board@ysu.am](mailto:board@ysu.am):

Դիմումները կից փաստաթղթերով, ընդունվում են **մինչեւ 2021 թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ**:

Հաշվի առնելով «Covid-19» համավարակով պայմանավորված իրավիճակը՝ մրցույթի մասնակցության դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) անհրաժեշտ է փոստային ծառայության միջոցով ուղարկել «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարին (հասցե՝ 0025, ք. Երեւան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, թիվ 508 աշխատասենյակ):

Մրցույթը տեղի է ունենալու **2021 թ. դեկտեմբերի 17-ին՝ ժամը 11:00-ին**, Երեւանի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (հասցե՝ ք. Երեւան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 5-րդ հարկ):

ԵՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ընտրությունների անցկացման եւ ռեկտորի նշանակման կարգը սահմանվում է «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգով, որը տեղադրված է ԵՊՀ ինտերնետային պորտալի «Փաստաթղթեր» բաժնում ([documentation.ysu.am](http://documentation.ysu.am)):

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարին էլեկտրոնային փոստի միջոցով՝ [board@ysu.am](mailto:board@ysu.am):

**«Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ**

### Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Ընտրած մարզաձեւի տեսություն», «Բռնցքամարտ» ՖՈՒՄ 4-09-016-ՖՈՒՄ 4-09-022» եւ «Հայոց լեզու եւ խոսքի մշակույթի հիմունքներ» մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար:

Մրցույթը անց է կացվում բանավոր՝ հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդելիք մոդուլին եւ մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում,
- կրթության մասին հավաստող փաստափուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն,
- մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչեւ 15:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**:

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 2-ին՝ ժամը 15:00-ին**, Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում, հասցեն՝ Արամ Մանուկյան 31:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 03-55-66 հեռախոսահամարով:

### Խոսք շնորհավորանքի

Երեւանի Գաղութային Գյուլժենկյանի անվան հ. 190 ավագ դպրոցի ողջ անչնակապիճ գերմոթեն շնորհավորում է դպրոցի տնօրեն Աստիճակ Զարիկյանին՝ ծննդյան 65-ամյակի առթիվ:

Աստիճակ Զարիկյանը ծնվել է՝ Անկախարժ լիեւրու համար, Ռուսոյից Ուսուցչուհի կոչումը պարգևատրվելով լիեւրու համար: Եւս մեր կրթօգուխի հեռաւոյունն է եւ մեր աստեղին կրթող եւ քաղաքացիական արժեհանակարգ շեւաւորող ճարտարաւոյունը: Եւս պարուագույնը վեհագույն է դարչուրել, անշուքի մեզ փեւրրել կարարելոյունը, դժւարի մեզ միշուր ելք է գրել, ուրախաւոյել դպրոցի հագոդաձ ամեն մանրուքով, ամեն շեւքժեւրումով, Ուայել իր հոգին միայն Ուարոյուն, լույսի համար ու արարել, արարել, արարել... Եւս կարողաւոյել է համահաւժել մի մեծ կոչելկրիսի եւ արեղձել մի աշխարհ, որն աշխարում է ժամաւոյունի ճշգրտոյունով: Եւս հագոդել է իր գործում, եւ դրա վառ աւաւոյունը հ. 190 դպրոցի՝ հանրաւոյունում ամենամեծ աւաւ դպրոցը լիեւրու փասարն է, ինչը, թեւեւս, երա աշխարանքի ամենամեծ պարգեւն է եւ լաւագույն պարաւախարս երա երեւեւաւաւաւ կախումախ:

Արկին շնորհաւորելով մեր սիրելի տնօրենին՝ մաղթում ենք երա կազառողղոյուն եւ գործունեոյուն երգանքի շարունակոյուն:



Երեւանի Գաղութային Գյուլժենկյանի անվան հ. 190 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

«Կրթություն» շաբաթաթերթը սիրով միանում է շնորհավորանքին եւ բարեմաղթանքներին:

### «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորի թափուր պաշտոնի համար մրցույթ

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՊՄՀ) հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ ՀՊՄՀ ռեկտորի թափուր պաշտոնի համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս այն քաղաքացիները, որոնք ունեն գիտական աստիճան եւ առնվազն հինգ տարվա ակադեմիական եւ գիտական գործունեության ստաժ:

Ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Գրավոր դիմում՝ հասցեագրված ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի նախագահին,
2. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը (լուսանկարի, բնակության վայրի նշագրումով էջերը),
3. Երկու գունավոր լուսանկար 35x45 մմ չափի,
4. Աշխատանքային գրքույկի պատճենը,
5. Ինքնակենսագրություն,
6. Բարձրագույն կրթության դիպլոմի, գիտական աստիճանի հավաստող վկայականի պատճենը եւ առնվազն հինգ տարվա ակադեմիական եւ գիտական գործունեության ստաժը հավաստող փաստաթղթեր (տեղեկանք աշխատանքի վայրից),
7. Հրատարակված գիտական աշխատանքների ցանկ,
8. Երաշխավորագիր (ըստ հայեցողության),
9. Հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ եւ ստորագրված ծրագրով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) պետք է ներկայացնել **մինչեւ 2021 թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ ժամը 10:00-17:00-ն (բացի շաբաթ, կիրակի եւ հանգստյան օրերից)**, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի քարտուղարություն՝ առձեռն կամ փոստով (հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Խանջյան 5, ՀՊՄՀ, N 104 աշխատասենյակ):

Մրցույթը տեղի կունենա **2021 թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 10:00-ին** Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Տիգրան Մեծի 17, ՀՊՄՀ-ի կենտրոնական մասնաշենք):

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար Կամո Վարդանյանին (հեռախոս՝ 59-70-79, էլեկտրոնային հասցեն՝ [vardanyankamo@aspu.am](mailto:vardanyankamo@aspu.am)):

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ













